

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ: «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 աշխատանքային օրվա ընթացքում այն չստանալու դեպքում Դուք իրավունք եք ստանում պահանջ ներկայացնելու Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե

1. Բողոքը «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել ապահովագրական ընկերության պատասխանը
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Գտնվելու վայրը՝ ՀՀ, 0010 ք. Երևան, Մ. Խորենացի փողոց 15
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ
Հեռախոս՝ (+ 374 60) 70-11-11
Ֆաքս՝ (+37410) 58-24-21
Էլ. փոստ՝ info@fsm.am



Սիրելի՛ հաճախորդ, /ընկերության անվանումը/ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ /ընկերության

անվանումը/ համաձայնել է դատական կարգով չվիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից /ընկերության անվանումը/ դեմ կայացված որոշումները:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ միջև վեճերը, սակայն կարող է «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ Կենտրոնական բանկ

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6

Հեռ.՝ 010 59 26 97

Էլ. հասցե՝ mcba@cba.am

Ֆաքս՝ 010 52 38 52

Կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: